ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 մայիսի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

59
(3090)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՈՒ Է ԻՐ ԱՂՋԿԱ ԱՆՈՒՆԸ ՍՄԱՅԼԻԿ ԴՐԵԼ ԵՎ ԲՈՂՔՈՒՄ ԱԺ ԱՄԲԻՈՆԻՑ

Երեկ ԱԺ իշխող խմբակցության պատգամավոր Նարեկ Գրիգորյանը խորհրդարանի ամբիոնից հանդես եկավ հուզական ելույթով՝ մեղադրելով ՁԼՄ-ներին իր 3 ամյա երեխային «թիրախավորելու» համար:

«3 տարեկան իմ երեխայի վրա հոդված տպեցին. դա բարոյական՞ էր, թե՞ անբարո...., - հայտարարեց Նորատուսցի պատգամավորը:

Իսկ ինչ էր գրվել լրատվամիջոցների կողմից, ավելի կոնկրետ՝ «Հրապարակ» օրաթերթի կողմից 2022 թվականի մայիսի 15-ին: Ըստ օրաթերթի՝ «Ինքնավնասումով բանակից ազատված Նարեկ Գրիգորյանը, որն ԱԺ ամբիոնից Իշխան Սաղաթելյանին «մալյոկ» էր անվանում, պարզվում է՝ 2018 թ. ծնված աղջկա անունը Սմայլիկ է դրել: Այս տեղեկությունը մեզ անհավանական թվաց եւ մենք զանգահարեցինք նրա հայրենի գյուղ՝ Նորատուս: Գյուղի համայնքապետարանի Կարինե անունով աշխատակցուհին մեզ ասաց. «Այո, ունենք, Գրիգորյան Սմայլիկ Նարեկի»: Ճշտեցինք՝ խոսքը ՔՊ-ական պատգամավորի դստե՞ր մասին է: Պատասխանն էր. «Հա, պատգամավորի աղջիկն է»»:

Փաստորեն, այս հրապարակումը Նարեկ Գրիգորյանը համարում է երեխային թիրախավորել:

Իհարկե, ծնողները կարող են ընտրել երեխայի ցանկացած անուն, բայց մամուլին մեղադրել թիրախավորման մեջ խիստ վտանգավոր է, քանի որ ստացվում է, թե իշխանությունն է փորձում սահմանել՝ ինչ կարելի է լուսաբանել, իսկ ինչ՝ ոչ: Իշխանության ներկայացուցիչները հաճախ շփոթում են քննադատությունը «թիրախավորման» հետ: Հանրային գործիչ լինելը ենթադրում է հանրային վերահսկողության ենթարկվել: Իսկ եթե որոշ տեղեկություններ կարող են դառնալ հանրային հետաքրքրության առարկա, ապա լրագրողները պարտավոր են դրանք ներկայացնել՝ առանց վախենալու «զգացմունքային» հակահարվածներից, որը երեկ արեց Նարեկ Գրիգորյանը: Ի վերջո, պատգամավորն ինքն է որոշել իր աղջկա անունը դնել Սմայլիկ:



Ադիկոլ Փաշինյանն ապրիլի 4-ին հյուրընկալել է պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Չան Թան Մանի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակությունը Փաշինյանի հետ հանդիպմանը ձեռնունայն չի եկել: Պաշտոնական աղբյուրներից «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ Վիետնամի Ազգային ժողովի նախագահ Չան Թան Մանը Փաշինյանին կնոջ շարֆ է նվիրել: Համաձայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած «Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողների նվերների հաշվառման ձեւաթղթի»՝ շարֆն արժեցել է 45 հազար 312 դրամ: Վարչապետի ստացած կնոջ շարֆը պատրաստված է բամբուկից եւ զարդանախշ տուփով է եղել: Բացի շարֆից՝ Փաշինյանին Վիետնամի Ազգային ժողովի նախագահ Չան Թան Մանը նվիրել է Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության Ազգային ժողովի շենքի 3D մոդելը՝ պատրաստված մետաղից: Այն պատրաստված է եղել վիետնամական Qua Quy ընկերության կողմից եւ արժեցել է 45 հազար դրամ: Կարող ենք ենթադրել, որ կնոջ շարֆը Աննա Հակոբյանի համար է եղել, իսկ մանրակերտը՝ Փաշինյանի, սակայն ինչպես հասկացանք, ո՛չ մեկը, ո՛չ մյուսը Փաշինյաններին պետք չի եկել:

Լրագրողներին իրենց գործունեության համար հատկացված օթյակից բռնությամբ դուրս հանելու (12.06.2024թ.-ին) գործով մինչ օրս որեւէ անձ մեղադրյալի կարգավիճակ չունի: ՀՀ քննչական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին, որ քրեական վարույթը նախաքննության փուլում է, կարգավիճակով որեւէ անձ չկա գործում: Նշենք, որ լրագրողներին իրենց գործունեության համար հատկացված օթյակից բռնությամբ դուրս հանելու գործով արդեն 5 լրագրող տուժող են ճանաչվել: Այս վարույթի հիմքը «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ համակարգող Դանիել Իոաննիսյանի դիմումն է: Հիշեցնենք, որ հունիսի 12-ին, երբ Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում անթույլատրելի տեսակի նռնակներ էին պայթեցնում ոստիկանները, ԱԺ-ում Կառավարության հարցուպատասխանի ժամանակ լրագրողներին բռնությամբ դուրս հանեցին լրագրողական օթյակից, որպեսզի նրանք ԱԺ նիստը չլուսաբանեն: Այս առիթով ՀՀ քննչական կոմիտեում ՀՀ Քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ սկսել են Արաբկիրի բաժին հրավիրել օթյակում գտնված լրագրողներին՝նրանց տուժող ճանաչելով: Տուժած լրագրողների թիվն այս պահին 5-ն է: Փետրվարի 24-ին կոմիտե են հրավիրվել «24 նյուզ»-ի լրագրող Հերմինե Միքայելյանը, «Ժողովուրդ» օրաթերթի խմբագիր Քնար Մանուկյանը, «5-րդ ալիք»-ի լրագրող Կարինե Մանգասարյանը, News.am-ի լրագրող Ռուզան Խաչատրյանը, որոնք ճանաչվել են տուժող եւ հարցաքննվել են: «Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցը կոնկրետ անուններ է տվել, թե ում ներկայությամբ են լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտել, եւ ով է կանգնած վերահսկել իրավիճակը: Այս պահին նախաքննության շահերից ելնելով՝ այլ մանրամասներ չենք հայտնում, սակայն հետեւում ենք Կոմիտեի քննության ընթացքին՝ սպասելով պատասխանատու պաշտոնյաներին պատասխանատվության կանչելու գործընթացին: Բայց 2 ամիս է քննություն է իրականացվում, կոնկրետ անուններ են տրված, սակայն մինչ օրս Կոմիտեում դեռ կոնկրետ քայլերի չեն դիմում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում իրականացված գնումների գործընթացը կասկածահարույց է: Համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը 2024 թ. օգոստոսի 27-ին շուրջ 13 միլիոն 428 հազար դրամի գույք է ձեռք բերել համայնքի մշակույթի տների համար: Ինչու է տրոհված գնել, ինչպես է վերահսկվում այդ բյուջետային ծախսերը՝ անհասկանալի են մնում: Առավել եւս, որ Մարտունու համայնքապետարանը իր այս տարվա գնումների մասին տեղեկություններ չի տեղադրել պետական համապատասխան էլեկտրոնային հարթակներում, որոնք ապահովում են հանրային վերահսկողությունը: Այս պայմաններում խախտվում է ամենաբարձր սկզբունքը՝ հանրային միջոցների թափանցիկ օգտագործման պարտադիր պահանջը: Հովհաննես Հովեյանը՝նախկինում Վարդենիկ համայնքի երկարամյա ղեկավարը (2005-2021), այժմ Մարտունու համայնքի ղեկավարն է 2021-ի դեկտեմբերի 23-ից: Այն փաստը, որ նման ծախսերը չեն արտացոլվում հանրային տվյալների բազաներում, ակամայից առաջացնում է հարցեր՝ արդյոք գործ ունենք ուղղակի ընթացակարգային բացթողման հետ, թե մտածված մութ գործարքների: Համայնքային ղեկավարները պարտավոր են առաջնորդվել բաց կառավարման եւ հաշվետվողականության սկզբունքներով: Իսկ երբ դրանց փոխարեն ունենք «լռությամբ պատված» ծախսեր, ապա պարտականությունն արդեն դառնում է լրատվամիջոցներինը՝ բացահայտել, բարձրաձայնել ու պահանջել պատասխանատվություն:

ԻՆՉ ՓՈՒԼՈՒՄ Է ՓԱՇԻՆՅԱՆԻ ԻՄՓԻՉՄԵՆԹԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

«ԲԱՑԱՌՎՈՒՄ Է՝ ՔՊ-ԻՑ ՄԵԿԸ ՄԻԱՆԱ». ԲԱԴԱԼՅԱՆ

ArmLur.am-ը զրուցել է ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Լուսինե Բադալյանի հետ՝ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ անվստահության գործընթաց սկսելու եւ հայտնելու մասին:

-Տիկին Բադալյան, ստացե՞լ եք իմփիչմենթի գործընթացի փաստաթուղթը, որով ընդդիմադիրները խնդրում եմ միանալ գործընթացին, ստորագրահավաք իրականացնել, եւ Նիկոլ Փաշինյանին անվստահություն հայտնել:

-Անկեղծ ասած, եղած բազմաթիվ նամակներից դա բաց եմ թողնել, բայց տեղյակ եմ, որ նման բան կա: Նման առաջարկ ստացել ենք, եւ կարծում եմ, որ նույնիսկ իմաստ չունի ամենայն մանրամասնությամբ ծանոթանալու փաստաթղթին. սա հերթականն է: Հերթական անգամ ընդդիմությունը իմփիչմենթի գործընթաց է նախաձեռնում: Ես վստահ եմ, որ ընդդիմությունն ի սկզբանե գիտեր, որ սա տապալված գործընթաց է:

-Ինչո՞ւ եք տապալված համարում, տիկին Բադալյան: Ձեր կարծիքով՝ ՔՊ-ից չկա՞ն մարդիկ, որոնք կմիանան գործընթացին:

-Ես բացառում եմ, որ ՔՊ-ից գեթ մեկ հոգի կմիանա այդ գործընթացին: Ընդամենը մեկ տարի է մնացել հերթական ընտրություններին, եւ այս մեկ տարին այն ժամանակն է, որ պետք է նախապատրաստվել ընտրություններին: Եթե կա քննադատություն իշխանության վերաբերյալ, եթե կա ասելիք ժողովրդին՝ իշխանությունը որ հարցում է սխալվել, կամ ինչ կարելի էր դրա փոխարեն անել, կամ անել ավելին՝ երկիրը ավելի ամուր հիմքերի վրա դնելու համար, հիմա ժամանակն է, որպեսզի դրա մասին խոսի ընդդիմությունը: Բայց կարծում եմ՝ քանի որ ընդդիմությունն ընդհանրապես աչքի չի ընկել ո՛չ օրենսդրական նախաձեռնություններով ո՛չ քաղաքական ելույթներով՝ բնականաբար, իր ընտրողներին ինչ-որ կերպ իր մասին հիշեցնելու համար ուղղակի նախաձեռնել է հերթական ակցիան:

-Տիկին Բադալյան, Դուք կարծում եք, որ հայ ժողովուրդը գո՞հ է Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությունից, եւ Դուք, որպես իշխանության ներկայացուցիչ, գո՞հ եք Նիկոլ Փաշինյանի աշխատանքից:

-Իշխանությունից ամբողջապես գոհ լինել պարզապես հնարավոր չէ, որովհետեւ ընթացքում լինում են բարեփոխումներ, լինում են օրենսդրական նախաձեռնություններ, որոնք հեռահար ունենալով շատ լավ նպատակներ՝ սկզբնական շրջանում կարող են նաեւ դժգոհություններ առաջացնել:

-Իսկ անձամբ Նիկոլ Փաշինյանի աշխատանքից գո՞հ եք:

-Եթե ժողովուրդը դժգոհ է, մենք այս մասին կարող ենք շատ հստակ իմանալ ընտրություններով: Եթե հասարակությունը դժգոհ է Նիկոլ Փաշինյանից, 2026 թվականին ուղղակի վստահության քվե չի տա նրան: Կգնահատի այս ամբողջ կատարած աշխատանքն ու փուլը եւ ուղղակի չի քվեարկի, այլ կընտրի այն քաղաքական ուժին, որին կվստահի: Ես անհնարին եմ համարում, որ ՔՊ-ից մարդիկ միանան իմփիչմենթի գործընթացին:

-Այդքան գո՞հ եք Նիկոլ Փաշինյանի աշխատանքից:

-Այստեղ գոհի ու դժգոհի հարց չէ: Մենք բոլորս շատ լավ տեսնում ենք, որ կան թերություններ, ու մենք փորձում ենք դրանք շտկել: Մեր պարտականությունն է շտկել թերություններն ու ծառացած խնդիրները, լուծել ու շարժվել առաջ: Մեր գոհ կամ դժգոհ լինելու խնդիրը չկա: Եթե ես ասեմ, որ մենք մեզանից ամբողջությամբ գոհ ենք, մեղմ ասած՝ սխալ կլինի եւ անընկալելի ցանկացած մարդու կողմից: Բնականաբար, մենք անընդհատ ունենք մարտահրավերներ եւ դրանց ուղղությամբ աշխատում ենք: Դա է մեր գործը: Մեր գործը չէ անվստահություն հայտնենք մեր թիմի ղեկավարի կամ ընդհանրապես մեր դեմ:

-Ընդդիմադիրներն ասում են, որ ՔՊ-ում կա մի զանգված, որ դժգոհ է Փաշինյանի աշխատանքից, վարած քաղաքականությունից, անվտանգային գործընթացից, խաղաղության պայմանագրի հարցերից: Իրենք վստահ են, որ ՔՊ-ում կան այնպիսի անձինք, որոնք կմիանան գործընթացին:

-Ես վստահեցնում եմ, որ դա չի համապատասխանում իրականությանը այն իմաստով, որ ընդդիմությունը միշտ էլ ամեն ինչ ասում է, եւ միշտ չէ, որ իրենց ասածները համապատասխանում են իրականությանը: Իսկ ինչ վերաբերում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դժգոհություններին, ապա ՔՊ-ն մի ամբողջ խմբակցություն է, որտեղ մեկից գոհ կամ դժգոհ լինել չի կարելի: Այսինքն՝ մենք կամ դժգոհ են ինքներս մեզնից, ոչ թե մեկ անձից, կամ գոհ ենք ինքներս մեզնից: Եթե մենք ունենք սխալներ, ապա պետք է փորձենք այդ սխալները շտկել:

-Տիկին Բադալյան, իսկ եթե հարցին ռեալ նայեք. Դուք ունեք հնարավորություն՝ իշխանության վստահությունը վերցնելու: Ժողովուրդը 50+ ձայն կտա՞ ՔՊ-ականներին:

-Ես կարծում եմ, որ նման կանխատեսումները շատ սխալ են: Ես զերծ կմնամ ենթադրություններ անելուց, որովհետեւ դա ժողովրդի որոշելիքն է: Եվ այս հարցում ուղղորդել կամ կարծիք հայտնել ես ինձ թույլ չեմ տա: Կարծում եմ՝ շատ երկար ժամանակ չի մնացել մինչեւ 2026 թվականը:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԱՅՑԻ ՕՐԸ ՀԱՅՏՆԻ Է

ՄԱՏՎԻԵՆԿՈՆ ԿԳԱ ՀԱՅԱՍՏԱՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հունիսի 5-6-ին Հայաստան է գալու Ռուսաստանի խորհրդարանի վերին պալատի՝ Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն: ArmLur.am-ի աղբյուրի ընդմամբ օրն արդեն հաստատվել է: Նիկոլ Փաշինյանի՝ Մոսկվա մեկնելուց եւ վերադարձից հետո Հայաստանում լուրջ զարգացումներ են սպասվում:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը չի կողմնորոշվում՝ ամռան սկզբին ինչպես դիմավորի Հայաստան այցելող ՌԴ Դաշնային խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյին:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին՝ հետաքրքրվելով. «2022 թվականի սեպտեմբերի 17-ին, երբ Դուք օդանավակայանում երկու ձեռքով ողջունելով, ծաղկեփնջով դիմավորեցիք ԱՄՆ ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիին, ՌԴ Դաշնային խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն տարակուսել էր այդ ջերմ վերաբերմունքից: Ի պատասխան՝ Դուք խոստացել էիք, որ երբ Մատվիենկոն Հայաստան գա, կգնաք եւ ինքնաթիռի մոտ նրան գրկած կդիմավորեք: Հիմա պարզվել է, որ Մատվիենկոն առաջիկայում Հայաստան կգա: Ըստ այդմ, ցանկանում ենք իմանալ՝ արդյոք կկատարե՞ք Ձեր խոստումը եւ նրան գրկած կդիմավորե՞ք ինքնաթիռի աստիճանների վրա»:

Սակայն ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը դեռ չգիտի՝ կատարելու է խոստումը, թե ոչ: Համենայնդեպս, նրա ուղարկած պատասխանը ոչնչի մասին է. ««Տեղեկատվության ազատության մասին» օրենքի իմաստով այն հարցում չի հանդիսանում»: Ահա Մատվիենկոյին դիմավորելու մասին ուղիղ հարցին ինչ անբովանդակ պատասխան է տվել Ալեն Սիմոնյանը Ազգային ժողովի նախագահի խոսնակի միջոցով:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՆՉ ՎԱՐԿԱԾՆԵՐ ԵՆ ԾՐԴՋԱՆԱՌՎՈՒՄ

Մայիսի 4-ին՝ առավոտյան ժամը 10:00-11:00-ն ընկած հատվածում, Ծաղկաձոր խոշորացված համայնքի Մարմարիկ գյուղում, նախնական վարկածի համաձայն գետն ընկած 2 տարեկան Տիգրանին արդեն 3-րդ օրն է չի հաջողվում գտնել: Երեկ՝ առավոտից, փրկարարական ջոկատները կրկին մեկնարկել են որոնողափրկարարական աշխատանքները Մարմարիկ գետի երկայնքով: Հարկ է նշել, որ փոքրիկի ծնողները հակված չեն գետն ընկնելու վարկածին:

Հիշեցնենք, որ մայիսի 4-ին՝ ժամը 10:00-11:00 ընկած հատվածում, Ծաղկաձոր խոշորացված համայնքի Մարմարիկ գյուղում լուրեր տարածվեցին, որ 2 տարեկան Տիգրանն ընկել է Մարմարիկ գետը: ArmLur.am-ը մանրամասներ է պարզել դեպքից:

Դեպքը տեղի է ունեցել առավոտյան: Երեխայի հայրը եւ պապիկը տանը մերձակա մեքենաների մոտ աշխատելիս են եղել, երբ երեխաներին ուղարկել են տուն, սակայն պարզ է դարձել, որ փոքրիկներից միայն մեկն է հասել տուն: Վարկածը հետեւյալն է, որ փոքրիկը մտել է տան բակ, ապա բակից անցնելով հարակից հողամաս՝ դուրս է եկել տան հետեւի մասում գտնվող ճանապարհը, ապա ինչ-ինչ հանգամանքներում ընկել գետը: Երբ դուստրը տուն է մտել, մայրը հետաքրքրվել է, թե տղան որտեղ է, իսկ 3-4 տարեկան քույրը ասել է, որ իր հետ չէ:

Ծնողները փորձել են ձայն տալ, գտնել, իսկ երբ թաղամասում փնտրելուց հետո չեն գտել, ահազանգել են փրկարարներին, որ գուցե երեխան գետն է ընկել: Հետաքրքիրն այն է, որ հարակից խանութի տեսախցիկները արձանագրել են տան շուրջ կատարվածը, սակայն ոչ մի կերպ տեսախցիկում արձանագրություն չկա երեխայի՝ գետն ընկնելու վերաբերյալ:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՏԱՆ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՎ

ArmLur.am-ը զրուցել է ՔՊ-ական պատգամավոր Հրաչյա Հակոբյանի հետ եւ հետաքրքրվել ենք՝ վերջինիս բնակարանի գողությունից ինչ բացահայտումներ կան:

Հիշեցնենք, որ լրագրողների հետ զրույցում ՔՊ խմբակցության պատգամավոր Հրաչյա Հակոբյանն ասել էր, որ իր տանը թալան է իրականացվել, տարել են գումար, մի քանի ոսկյա շղթա, մեկ ժամացույց, ընդհանուր վնասի չափը կազմում է 7-8 մլն դրամ: «Երեւույթն ինքնին մտահոգում է՝ կլինի դա իմ տունը, թե յուրաքանչյուր քաղաքացու տուն: Չեմ կարող ասել՝ դա ինչի արդյունք է, բայց այնպես չէ, որ նախկինում գողություն չի եղել: Ոստիկանություն դիմել եմ հունվարի 14-ին, որովհետեւ այդ ժամանակ եմ վերադարձել, դեպքը տեղի է ունեցել դեկտեմբերի 29-ին, գնացել էի ԱՄՆ՝ երեխաներիս տեսնելու»,- ասել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔՊ–ԻՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՍԵԼ ԵՆ

Armlur.am-ի տեղեկությունների համաձայն՝ ՔՊ-ին ներքին կարգով ասել են, որ ԲԴԽ գիտնական անդամներից Աշոտ Հայրապետյանին կողմ քվեարկեն, իսկ ահա մյուս գիտնական անդամների մասով դեռեւս որոշում չկա: Նշենք, որ ԲԴԽ-ում 3 գիտնական անդամի թափուր տեղ կա ու այս պահին 3 գիտնական թեկնածու Ազգային ժողովում են:

ՄԻՋՆՈՐԴԻ ԴԵՐ

Իրանը ողջունում է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության պայմանագրի տեքստի շուրջ համաձայնությունը, հայտարարել է Իրանի փոխարտգործնախարար Սաիդ Խատիբզադեն Միջազգային հարաբերությունների վերլուծության կենտրոնում (CAIR) կայացած միջոցառման ժամանակ: Նրա խոսքով՝ Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը կարող է միջնորդի դեր ստանձնել Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության համաձայնագրի ստորագրման գործում: «Ես կարծում եմ, որ այս հարցը կարտացոլվի նաեւ երկու երկրների ամենօրյա շփումներում», - հավելեց նա:

ԿՈՊԻՐԿԻՆԸ ԿՄԻԱՆԱ ԵՐԹԻՆ

Հայաստանում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինը կմիանա Հայրենական Մեծ պատերազմում հաղթանակի 80-ամյակին նվիրված «Անմահ գնդի» երթին դեպի «Հաղթանակ» զբոսայգի: Մայիսի 9-ին՝ ժամը 12:00-ին, Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 80-ամյակի առթիվ, Արաբկիր համայնքի Սուրբ Խաչ եկեղեցու հարակից տարածքից «Անմահ գունդ» պատմամշակութային հասարակական կազմակերպությունը կկազմակերպի հիշատակման ավանդական երթ դեպի Հաղթանակի այգու «Անմար կրակ» հուշահամալիր: Այնուհետեւ ժամը 13:30-ին «Մայր Հայաստան» հուշարձանի մոտ կանցկացվի համերգային ծրագիր:

«Եկեք միասին հիշենք մեր հայրենիքի պաշտպանության համար զոհված հերոսներին եւ տոնենք մեր ժողովրդի փառավոր հաղթանակները»,- նշվում է «Անմահ Գունդ» կազմակերպության հաղորդագրությունում:

4–ՐԴ ՓՈՒԼ

Թեհրանի միջուկային ծրագրի շուրջ ԱՄՆ-Իրան բանակցությունների չորրորդ փուլը կարող է տեղի ունենալ մայիսի 10-11-ը: Այս մասին ասել է ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվեն Ուիթկոֆը: Նրա խոսքով՝ Իրանի հետ բանակցությունները դրական են: «Մենք որոշակի առաջընթաց ենք գրանցում: Հուսով եմ, որ դրանք ճիշտ ուղղությամբ են շարժվում: Նախագահը ցանկանում է, որ այս հարցը լուծվի դիվանագիտական ճանապարհով, եթե հնարավոր է, ուստի մենք անում ենք ամեն ինչ, որպեսզի դրանք շարունակվեն», - ասել է Ուիթկոֆը:

ՆԱԽԱԳԻԾԸ ՄԵՐԺՎԵՑ

ՔՈՉԱՐՅԱՆԸ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԽՆԴՐՈՒՄ ԼՐԱԳՐՈՂԻՑ

ԱԺ-ում Անդրանիկ Քոչարյանի կողմից լրագրողին վիրավորելուց հետո՝ երեկ տեղի էր ունենում Լրագրողների 2-րդ ակցիան: Նրանք հայցում են, որ միջադեպի կապակցությամբ Անդրանիկ Քոչարյանը ներողություն խնդրի լրագրողներից: Հիշեցնենք, որ մարտի 20-ին ՔՊ-ական պատգամավոր, ԱԺ անվտանգության եւ պաշտպանության հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը հերթական անգամ աչքի է ընկել լկտի վարքագծով՝ այս անգամ թիրախավորելով կին լրագրողին: Պատգամավորը ճեղագրույցի ժամանակ թիրախավորել է «Tribune» կայքի լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանին: ԱԺ-ում ճեղագրույցի ժամանակ նա նախ ցուցում է տվել, թե որտեղ պետք է կանգնի լրագրողը. «Էն կողմ կանգնեք: Էդպես եմ ուզում, մի խանգարեք ձեր գործընկերներին, Դուք միշտ ինձ խանգարում եք, հակառակ դեպքում՝ ես կգնամ, չեմ պատասխանի ձեր գործընկերներին: Ես առաջնորդվում եմ հոգեւորականի այն առաջարկով, որ ձեզ արեց՝ «մաքրե՛ք ձեր շրթունքները»»,-ասել էր Քոչարյանը:

Լրագրողի դիտարկմանը, թե ինչու է պատգամավորը իրեն բուլինգի ենթարկում, նա պատասխանեց, որ ոչ թե լրագրողի, այլ տիկին Ջեբեջյանի հետ է խոսում: Լրագրողն էլ պահանջեց հիշել, թե ինչու էր հոգեւորականը հորդորում իրեն «մաքրել շուրթերը»: «Ձեր պահվածքը ո՛չ տղամարդկային է, ո՛չ մարդկային է, ո՛չ էլ հարիր է պաշտոնյայի, չե՞ք կարծում, որ պետք է ներողություն խնդրեք: Ձեր պահվածքը անթույլատրելի է»,-ասաց Ջեբեջյանը: Քոչարյանը հրաժարվել էր ներողություն խնդրել եւ մտել էր իր առանձնասենյակ:

ԱԺ-ում պատգամավոր Թագուհի Թովմասյանը ներկայացրեց Անդրանիկ Քոչարյանի վարքը քննող էթիկայի հանձնաժողով ձեւավորելու նախահիծը: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների ներկայացրած «Պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» ԱԺ որոշման նախագիծը երեկ մերժվեց 28 կողմ, 1 դեմ, 47 ձեռնպահ ձայներով:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԼԵՎՈՆ ՔՈՉԱՐՅԱՆԸ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

«Հիմարի մեկն ա՝ դրա համար»:

Այսպես երեկ՝ մայիսի 6-ին, ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում արձագանքեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լեւոն Քոչարյանը՝ անդրադառնալով հարցին, թե իր կարծիքով ինչու է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն իր հորը՝ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, համարում ռուսական շպիոնի կարգավիճակ ունեցող:Այլ հարցերի նա չպատասխանեց՝նշելով, որ դրա վերաբերյալ երկրորդ նախագահի գրասենյակի կողմից պատասխան եղել է:

ՈՎ Է ՆՈՐ ՊԵՏԸ

ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի՝ ապրիլի 17-ի հրամանով՝ Դավիթ Աղաբալյանը նշանակվել է ՆԳՆ ներքին անվտանգության եւ հակակոռուպցիոն վարչության պետ: Նշենք, որ Դավիթ Աղաբալյանը ծնվել է 1979թ. փետրվարի 17-ին Ստեփանակերտում: Զբաղեցրել է պետական մի շարք պաշտոններ:

ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԽՈՍԵԼ ԵՆ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հեռախոսազրույց է ունեցել Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի հետ, հայտնում է Կրեմլի մամուլի ծառայությունը: «Կայացել է կարծիքների փոխանակում միջազգային եւ տարածաշրջանային արդիական հարցերի շուրջ, այդ թվում՝ Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ Օմանի միջնորդությամբ իրանական միջուկային ծրագրի շուրջ բանակցությունների ընթացքի վերաբերյալ»,-ասվում է հաղորդագրության մեջ: Հաստատվել է ռուսական կողմի պատրաստակամությունը՝ նպաստելու այս երկխոսության առաջխաղացմանը՝ միջազգային իրավունքի սկզբունքների վրա հիմնված արդար համաձայնագրի հասնելու նպատակով»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՕԳՈՒՄ ԿԱԽՎԱԾ

«Ադրբեջանում ապօրինի պահվող հայերի խնդիրը ոչ միայն մնում է օդում կախված, այլ օգտագործվում է Հայաստանի դեմ նոր քաղաքական, իրավական, ռազմական, քարոզչական գործողությունների նախապատրաստման համար»,-ԱԺ-ում ասելէ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանը: Ըստ նրա, անկախ այն հանգամանքից, թե Բաքվում գտնվող հայերը ինչ հանգամանքներում, ինչ կարգավիճակով են գերեվարվել, նրանց նկատմամբ ինչ հոդվածներով են քրեական գործեր կարվել, նրանք պետք է մշտապես լինեն հայկական պետության ուշադրության եւ պաշտպանության ներքո: «Այն ցավի, տառապանքի, զրկանքների ու ճնշումների տակ, որոնցում Ադրբեջանում գտնվող հայերն են, դժվար է բառերով ու էմոցիաներով ներկայացնել: Մեկ այլ ողբերգական իրողությունների ու ապրումների մեջ են նրանց ընտանիքներն ու հարազատները: Առ այս պահը Ադրբեջանը հրաժարվում է ներկայացնել Ադրբեջանում գտնվող հայերի իրական թիվը եւ պաշտոնական հրապարակված տվյալները՝ 23-ը, շատ հեռու է իրականությունից: Թեեւ պաշտոնական մակարդակում որոշակի պարբերականությամբ հիշատակվում է Ադրբեջանում անօրինական պահվող հայերի հարցը, սակայն բավարար, գործուն ջանքեր չեն գործադրվում ո՛չ պաշտոնապես հաստատված 23 անձանց, ո՛չ էլ մեր այն հայրենակիցների մասով, որոնք ունեն անհետ կորածի կարգավիճակ, սակայն Ադրբեջանը նրանց Բաքվում գտնվելը չի հաստատում»,- ասաց ընդդիմադիր պատգամավորը:

ՆԱԽԿԻՆ ՊԵՏԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Դատարանը բավարարել է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի նախկին ղեկավար Արմեն Դանիելյանին կալանավորելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը: Այս պահին ՍԱՏՄ նախկին ղեկավարը կալանավորված է: Հակակոռուպցիոն կոմիտեն երեկ ձերբակալել էր ՍԱՏՄ եւս մի քանի աշխատակցի: Նրանց նկատմամաբ խափանման միջոց դեռ ընտրված չէ: ՍԱՏՄ նախկին ղեկավարը ձերբակալվել է ծառայողական լիազորություններն օգտագործելով առանձնապես խոշոր չափերի գույք հափշտակելու մեղադրանքով: Հիշեցնենք, որ Արմեն Դանիելյանին Նիկոլ Փաշինյանը պաշտոնից ազատեց օրեր առաջ՝ապրիլի 30-ին:

ԴԻԱԿՆԵՐԻ ԴՆԹ ԹԵՍՏԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆԸ՝ ԾՆՈՂՆԵՐԻ ՀՆՉԵՑՐԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ArmLur.am-ը զրուցել է ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանի հետ՝ անհետ կորած զինծառայողների ծնողների պահանջների եւ սխալ ԴՆԹ թեստերի արձանագրված դեպքերի մասին:

-Պարոն Թորոսյան, անհետ կորած զինվորների ծնողները, հարազատները Ձեզ են փնտրում: Նրանք ասում են, որ Դուք համարձակություն չունեք, որ գաք եւ խոսեք:

-Իրենք իմ տեղը շատ լավ գիտեն: Ես եղել եմ նախորդ լսմանը, եւ ինձ հարց չի ուղղվել:

-Պարոն Թորոսյան, ծնողներն ասում են, որ Դուք եք եղել առողջապահության նախարարը, եւ ԴՆԹ թեստերի պատասխանատուն Դուք եք:

-Իմ հորեղբոր տղայի դիակը նույն կերպ է ճանաչվել, ինչպես հազարավոր այլ դիակներ: Եվ կա ի պաշտոնե նախարար եւ դատաբժշկական կենտրոնի պետ, թող իրենցից պահանջեն:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ անհետ կորածների ծնողները Արսեն Թորոսյանին եւ Միեր Բիշարյանին կանչել են ԱԺ՝ «խաբելու համար պատասխան տալու»:

Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Անհետ կորած զինվորների ծնողները երեկ ԱԺ-ում կայացած հանդիպման ժամանակ պահանջել են, որ խորհրդարան ներկայանա Արսեն Թորոսյանը, ով եղել է առողջապահության նախարարը, եւ Միեր Բիշարյանը, ով առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի տնօրենն է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթի՝ ԱԺ-ին մոտ կանգնած աղբյուրները փոխանցում են, որ դռնփակ նիստի ընթացքում ծնողները պահանջել են, որ ՔՊ-ական, այսօր առողջապահության հարցերի հանձնաժողովի նախագահ Արսեն Թորոսյանը ներկայանա Միեր Բիշարյանի հետ եւ պատասխանի իրենց հարցերին, թե ինչու է շիլաշփոթ ստեղծվել զինվորների դիակների հարցում, ինչպես է ստացվել, որ զինվորի դիահերձմամբ 3 ձեռքի համընկնում է եղել, եւ ասել են՝ եկե՛ք, տարե՛ք ձեր երեխային հուղարկավորեք: Բայց 3 ձեռք «ունեցող» դիակը ծնողն ինչպե՞ս ընդունի որպես իր որդի եւ հուղարկավորի: Անդրանիկ Քոչարյանն էլ չի կանչել Արսեն Թորոսյանին ծնողների մոտ՝ բացատրություններ պահանջելու:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ նաեւ, որ ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար Արթուր Պողոսյանը նույնպես չի կարողացել անհետ կորած զինվորների հարազատների հարցերին պատասխանել, նորություններ հայտնել, ինչը էլի զայրացրել է նրանց:

Դիակների ԴՆԹ հետազոտության ողջ խնդիրը ծնողներն Արսեն Թորոսյանից են պահանջել, պարզապես Արթուր Պողոսյանը հայտնվել է թիրախում՝ իր անտեղյակությամբ եւ անպատրաստվածությամբ. սակայն օբյեկտիվորեն նա ասելու շատ բան էլ չունի: Ի դեպ, ԱԺ պատգամավոր, զոհվածի հայր Գեղամ Նազարյանը, երբ ծնողներին առաջարկել է իրականության աչքերին նայել եւ ողջերի մեջ չփնտրել իրենց երեխաներին, իր այս խոսքերով հունից հանել է ծնողներին, ովքեր ինչպես դահլիճում, այնպես էլ ներսում քաշքշել են Նազարյանին՝ պահանջելով անցյալով չխոսել իրենց երեխաների մասին:

Կարճ ասած՝ Անդրանիկ Քոչարյանի կազմակերպածը հերթական շոուն էր, որն էլի խաղացել է ծնողների հույզերի հետ՝ նրանց հարցերին որեւէ լուծում չտալով: Օրվա վերջում ծողները հայհոյում էին նաեւ Անդրանիկ Քոչարյանին՝ իրենց խաբելու համար»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՏԱՐԱԾԵԼ Է ՊՈՌՆՈԳՐԱՖԻԿ ՆՅՈՒԹԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Մ.Բ.-ն ձեռք է բերել եւ իր բջջային հեռախոսում պահպանել է մանկական պոռնոգրաֆիա պարունակող տեսանյութեր: Այնուհետեւ, «Տելեգրամ» հեռահաղորդակցման հավելվածի ալիքում հրապարակված հայտարարությամբ անորոշ անձանց առաջարկել է մանկական պոռնոգրաֆիա պարունակող տեսանյութերը եւ դիտելու ցանկություն հայտնած օգտատերերին նամակագրության միջոցով ուղարկել դրանք: Մ.Բ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասով (պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելը, տարածելը կամ պահպանելը): Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

4 ՀՈԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ԻԻՀ-ում գտնվող անձն առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 15 կգ թմրամիջոցը, մաքսանենգությամբ տեղափոխել է ՀՀ, որի մի մասը նախատեսված է եղել Հայաստանի տարածքում իրացման, իսկ մյուսը՝ առանձնապես խոշոր չափերով՝ 4,3 կգ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը ՀՀ տարածքով մաքսանենգ ճանապարհով Վրաստան տեղափոխելու համար: Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Գ.Ա.-ն եւ Ա.Մ.-ն փորձել են ձեռք բերել մաքսանենգ ճանապարհով ՀՀ տեղափոխված թմրամիջոցներից 95,43 գրամ «Մարիխուանա» տեսակի եւ 96,43 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցները, սակայն ճանապարհին ձերբակալվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից:

Նույն օրը Ա.Կ.-ն եւ Մ.Օ.-ն Հայաստանի տարածքով մաքսանենգ ճանապարհով Վրաստան տեղափոխման համար նախատեսված առանձնապես խոշոր չափերով՝ 4,3 կգ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցն իրենց կամքից անկախ հանգամանքներում չեն կարողացել անցկացնել սահմանով, քանի որ ձերբակալվել են: Ա.Կ.-ի եւ Մ.Օ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի եւ 43-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի, Գ.Ա.-ի եւ Ա.Մ.-ի նկատմամբ՝ 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի: Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: 4 անձի վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին: 9 անձի վերաբերյալ քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

ԻՐԱՎԻՃԱԿ

14-ԱՄՅԱ ԱՂՋԿԱ ԴԻՆ ԳՏԵԼ ԵՆ

Երեկ ՆԳՆ փրկարար ծառայողները Երեւանյան լճում՝ լճի եւ գետի միացման հատվածում, հայտնաբերել են որոնվող, 2012 թվականին ծնված Մայա Վորյատկինայի դին եւ դուրս բերել ափ:

ArmLur.am-ը դեպքի վայրում արձանագրել է փրկարարների աշխատանքը: Նշենք, որ դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Շենգավիթի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Արթուր Մկրտչյանի գլխավորությամբ: Դեպքի մասին ոստիկանության Շենգավիթի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ: Հիշեցնենք, որ ապրիլի 28-ին ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարները, Երեւանի հրշեջ-փրկարարական ջոկատից մի քանի փրկարարներ, ինչպես նաեւ Թիավարության ֆերերացիայի մեծ թվով թիավարներ շարունակել են Ուկրաինայի Հանրապետության անչափահաս քաղաքացու դիակի հայտնաբերման աշխատանքները:

Աշխատանքները ղեկավարում էին Հայաստանի Հանրապետության ներքին գործերեւի նախարարության փրկարար ծառայություն ՓՈՒՎ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի պետ Հայկ Նաղդալյանը եւ ՀՀ ՆԳՆ ՓԾ ՓՈՒՎ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի 1-ին փրկարարական ջոկատի հրամանատար Սերգեյ Բիձյանը:

Մի քանի ժամ տեւած որոնողական աշխատանքները Հրազդան կիրճից ուղղություն էր վերցրել դեպի Երեւանյան լիճ եւ թիավարները իրենք էին ցանկություն հայտնել մասնակցելու որոնողական աշխատանքներին, որը ընդգրկված էր մի քանի կմ:

Հիշեցնենք՝ ապրիլի 27-ին առեղծվածային դեպք էր տեղի ունեցել Երեւանում: Ժամը 17:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ էր ստացվել, որ Հրազդանի կիրճում, ըստ նախնական տեղեկությունների՝ Մանկական երկաթուղու տարածքում, օտարերկրացի անչափահաս քաղաքացին ընկել է Հրազդան գետը:

ԽՈՒԶԱՐԿԵԼ ԵՆ

ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի ծառայողները քաղաքացուհու հետ տեսակցությունից հետո խուզարկության են ենթարկել կալանավորված անձ Ա.Հ.-ին: Հայտնում են ՔԿԾ-ից:Խուզարկության արդյունքում կալանավորված անձի գոտկատեղի հատվածից ծառայողները հայտնաբերել են թաքցված 2 բջջային հեռախոս եւ 2 զույգ անլար ականջակալ: Փաստի առթիվ ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 5-ից 6-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 173 դեպք, որից 14-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԸ ԱՆՏԵՂՅԱԿ Է ԴՊՐՈՑՆԵՐԻՑ

Ցածր աշխատավարձի պատճառով Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում քիչ են տղամարդ ուսուցիչները: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին մեր թղթակիցը հարցրել է՝ ապրիլի 25-ի դրությամբ Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում քանի՞ աշխատող կա, նրանցից քանի՞սն են արական սեռի: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող դպրոցներում կա 1634 աշխատող: Տավուշի մարզպետի աշխատակազմը նման հաշվառում չի իրականացնում»:

ՄՆԱՑԻՆ ԱՌԱՆՑ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ

Տավուշի մարզպետարանը 2024թ.-ին մրցույթ էր հայտարարել մարզում 1410 կովերի արհեստական սերմնավորման համար: Մրցույթն անցկացվել էր կառավարության 2024 թ. օգոստոսի 22-ի N 1392-L որոշմամբ հաստատված՝ «Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի» շրջանակներում: Ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր կովի սերմնավորման համար սերմնավորողին փոխհատուցել 10 հազար դրամ (5 հազար դրամը վճարելու էր անասնատերը): Մրցույթին կարող էին մասնակցել այն կազմակերպությունները, որոնք ունեն տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու առնվազն մեկ տարվա փորձ եւ համապատասխան գործունեությամբ զբաղվելու հավաստագիր ունեցող մասնագետներ, նաեւ ունեն վարկային դրական պատմություն: Հայտերի ընդունման վերջնաժամկետն էր 2024թ. դեկտեմբերի 12-ը: Սակայն մրցույթը չկայացավ, որովհետեւ մասնակիցներ չեղան: Մարզպետարանը նոր մրցույթ հայտարարեց: Այս տարվա փետրվարին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել, թե որ կազմակերպությունն է հաղթել մրցույթում: Մարզպետարանից պատասխանել են. «Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում կովերի արհեստական սերմնավորման վերաբերյալ մրցույթում հաղթող է ճանաչվել Ա/Ձ Դավիթ Նավասարդյանը: Պայմանագրի կնքման աշխատանքներն ընթացքի մեջ են»: Մարզպետ Հ. Ղալումյանին մեր թղթակիցը հարցրել է՝ ապրիլի 25-ի դրությամբ մարզի որ համայնքում քանի՞ կով է արհեստական սերմնավորվել: Մարզպետարանից պատասխանել են. «1410 կովերի արհեստական սերմնավորման ծրագրի իրականացման համար հայտ ներկայացնող մասնակից չի եղել»:

Բա ինչ եղավ կովերի արհեստական սերմնավորման մրցույթում հաղթող ճանաչված Ա/Ձ Դավիթ Նավասարդյանը: Մայիսի 2-ին Տավուշի մարզպետարանում մեր թղթակիցը հանդիպել է մարզպետարանի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Վաղարշակ Սուքոյանին, ով հայտնել է, որ նշված կազմակերպությունը կովերի արհեստական սերմնավորման աշխատանքներ իրականացնելու համար պայմանագիր չի կնքել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲԱԿՎԱՔԻ ՆԻՍՏԵՐԻՑ

ԱՆԿԱԽ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

Մենք ունեք տեղեկություն, որ Բաքվում գտնվող միջազգային անկախ հետազոտողի մուտքն արգելվել է Ռազմական դատարան: Այս մասին հայտնել է ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի ներկայացուցիչ, փաստաբան Սիրանուշ Սահակյանը:

«Դատարանի շենքը խստագույնս վերահսկվում է: Թեեւ Ադրբեջանն ամեն անգամ ասում է, թե լսումները բաց են, սակայն հետազոտողի մուտքն արգելվել է: Նրան տեղեկացրել են, որ միայն Գլխավոր դատախազության կամ Գերագույն դատարանի թույլտվությամբ է հնարավոր մուտք գործել տարածք, իսկ հետո Ադրբեջանում գտնվելու ժամանակահատվածում նա ենթարկվել է նաեւ հետապնդումների: Սա այն է, ինչ պետք է իմանալ Բաքվում իրականացվող «բաց դատավարությունների» մասին»,- նշել է փաստաբանը:

Սիրանուշ Սահակյանի խոսքով՝ ստացվել են նաեւ տեղեկություններ միջազգային անհատ իրավապաշտպաններից եւ ՀԿ-ների ներկայացուցիչներից, որոնք պաշտոնապես դիմել են Ադրբեջանին՝ նիստերին մասնակցելու թույլտվություն ստանալու եւ երկիր մուտք գործելու համար, բայց նրանց դիմումները չեն բավարարվել: «Բաքվում հավատարմագրված դիվանագետներին եւս չի հաջողվել ներկա գտնվել նիստերին, թեեւ դրա համար նրանք պաշտոնական ընթացակարգերին համապատասխան դիմումներ են ներկայացրել:

Ադրբեջանական օրենսդրությունը համապատասխանեցված է միջազգային ստանդարտներին, ըստ որոնց, դռնբաց դատավարություններին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ցանկացող: Մենք իրականում գործ ունենք իրավիճակի հետ, երբ իրենք իրենց իսկ օրենքը չեն հարգում»,- ընդգծել է նա: Սիրանուշ Սահակյանը նաեւ խիստ մտահոգություն է հայտնել Ադրբեջանի կողմից Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի՝ Բաքվից դուրս բերման պահանջի առնչությամբ, որը, ըստ նրա, մեծ խնդիրներ է առաջացնելու հայ գերիների համար: «Տեղեկություն ունեմ, որ արդեն երկու ամիս է, ինչ Կարմիր Խաչին չի հաջողվում այցելել ազատազրկման դատապարտված որոշ հայ գերիների: Մենք չգիտենք, սա տեխնիկական հարց է, թե պայմանվորված է երկրում Կարմիր խաչի գործունեությունը դադարեցնելու մասին ծանուցմամբ, եւ արդեն իսկ սկսվել են սահմանափակումները»,-նշել է փաստաբանը:

Նրա խոսքով՝ բոլոր այս տեղեկություններն իրենք պարբերաբար ներկայացնում են միջազգային կազմակերպություններին:

Նշենք, որ մեր հայրենակիցների նկատմամբ դատական ֆարսը շարունակվում է: Այսօր Բաքվի ռազմական դատարանում տեղի կունենան Ռուբեն Վարդանյանի գործով հերթական լսումները: Նա շարունակում է ցուցմունք չտալ, նախորդ նիստում կրկին բացարկ է հայտնել դատարանին՝ մատնացույց անելով, որ դատարանն անտեսում է նախաքննության ընթացքում թույլ տրված խախտումները եւ շարունակում է խախտել արդար դատաքննության իր իրավունքը:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԹՐԱՄՓԸ ԿՊԱՐԳԵՎԱՏՐԻ «ԻՆՔՆԱԿԱՄ ԱՐՏԱՔՍՎՈՂՆԵՐԻՆ»

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը պատրաստ է պարգեւատրման տեսքով 1000-ական դոլար վճարել այն անօրինական միգրանտներին, որոնք կորոշեն կամավոր լքել երկիրը: Այս մասին հայտարարություն է տարածել ԱՄՆ ներքին անվտանգության նախարարությունը:

«Եթե դուք այստեղ եք անօրինականորեն, ապա «ինքնաարտաքսումն» ԱՄՆ-ից հեռանալու լավագույն, առավել անվտանգ եւ նվազագույն ծախսեր պահանջող միջոցն է՝ խուսափելու ձերբակալությունից»,-մեջբերված է գերատեսչության ղեկավար Քրիստի Նոյեմի խոսքը հայտարարության մեջ:

Նախարարությունն առաջարկում է վճարել ուղեւորության վարձը եւ պարգեւատրում ստանալ CBP Home բջջային հավելվածի միջոցով՝ տուն վերադառնալու համար: Յուրաքանչյուր անօրինական միգրանտ, որն այս հավելվածն օգտագործում է «ինքնաարտաքսման» համար, հայրենիք վերադառնալու փաստը հաստատելուց հետո ստանում է 1000 դոլար: Հայտարարության մեջ ընդգծվում է, որ նույնիսկ այս վճարի դեպքում անօրինական միգրանտների արտաքսման ծախսերը կնվազեն շուրջ 70%-ով: «Ներկայում անօրինական ներգաղթյալին ձերբակալելու, կալանքի տակ պահելու եւ վտարելու միջին ծախսերը կազմում են 17 121 դոլար», - նշված է հայտարարության մեջ:

The Associated Press-ը նշում է, որ ներգաղթի քաղաքականության խստացման շրջանակներում Թրամփի վարչակազմը հիմնովին նորացրել է պետության նախկին ղեկավար Ջո Բայդենի օրոք մշակված հավելվածը: ԱՄՆ-ի մաքսային-սահմանապահ ծառայության CBP One հավելվածը, որը հնարավորություն էր տալիս մուտք գործել գերատեսչության տարբեր ծառայություններ երկիր մտնելու եւ ապաստան ստանալու համար, այժմ կոչվում է CBP Home եւ նախատեսված է «միգրանտներին օգնելու վերադառնալ հայրենիք»: Վերջին ամիսներին ԱՄՆ նախագահը մի շարք խիստ միջոցներ է ձեռնարկել անօրինական միգրացիայի դեմ պայքարի շրջանակներում: Թրամփն իր պաշտոնակալությունից անմիջապես հետո հայտարարեց Մեքսիկայի հետ սահմանին արտակարգ դրության ռեժիմ սահմանելու մասին:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՎԱՐՏՎԻ

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը հայտարարել է Ադրբեջանում իր գործունեությունն ավարտելու մասին: Այդ մասին հաղորդագրությունը հրապարակվել է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կայքում: Նշվում է, որ Ադրբեջանում իր 30-ամյա գործունեության ընթացքում կարեւոր դեր է խաղացել կառավարությանը եւ այլ ազգային ու տեղական գործընկերներին օգնելու գործում՝ բարելավելու մայրական առողջության պահպանությունը, պայքարելու գենդերային բռնության դեմ ու խթանելու գիտահեն ժողովրդագրական քաղաքականությունը: Նշվում է նաեւ, որ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամն Ադրբեջանի հետ համագործակցությունը կշարունակի Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի, ինչպես նաեւ իր գլխավոր գրասենյակի միջոցով: 2025 թվականի մարտին ադրբեջանական լրատվամիջոցները հայտնել էին, որ Ադրբեջանի իշխանությունները ցանկանում են փակել ՄԱԿ-ի 4 գրասենյակները՝ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը, փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՖԱՍԹ» ԲԱՆԿԸ ՎԵՐԱԲԵՐԵՆԴԱՎՈՐԵԼ Է «ՇՐՋԱՆԱՅԻՆԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

«Ֆասթ» բանկը վերաբերենդավորել է Աբովյան 37 հասցեում գտնվող «Շրջանային» մասնաճյուղը: Մասնաճյուղի վերաբացման արարողությանը մասնակցել են բանկի ղեկավար կազմի ներկայացուցիչներ, աշխատակիցներ, ինչպես նաեւ հավատարիմ հաճախորդներ: Մասնաճյուղը պատրաստ է սպասարկել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց՝ տրամադրելով ավանդական եւ նորարարական բանկային ծառայությունների լայն շրջանակ: «Ֆասթ» բանկի «Շրջանային» մասնաճյուղի կառավարիչ Արա Վարդանյանն ասել է. «Այս մասնաճյուղը տարբերվում է Բանկի բոլոր մնացած մասնաճյուղերից, քանի որ հենց այստեղ է սկսվել «Ֆասթի» պատմությունը: Շրջանային մասնաճյուղը «Ֆասթի» առաջին մասնաճյուղն է, որը բացվել է 1994 թվականի ապրիլի 1-ին: Այս հասցեն ոչ միայն հիշեցնում է մեր անցած ճանապարհի մասին, այլեւ արդեն երեք տասնամյակ ծառայում է որպես մեր արժեքների խորհրդանիշը»: Նոր մասնաճյուղը համալրված է ինքնասպասարկման տերմինալներով, արագ սպասարկման գոտիով եւ անհատական ֆինանսական խորհրդատվություն ստանալու հնարավորությամբ: Հաճախորդներին հասանելի են բանկի բոլոր հիմնական ծառայությունները՝ ընթացիկ հաշիվներ, ավանդներ, վարկեր, գումարային փոխանցումներ եւ այլն:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը:

ԱՆՁՐԵՎՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Ակտիվ ցիկլոնի գործունեությամբ պայմանավորված՝ մայիսի 5-ին հանրապետության ողջ տարածքում դիտվել են ամպրոպային բնույթի հորդառատ անձրեւներ, առանձին հատվածներում՝ նաեւ կարկուտ: «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ից հայտնում են, որ Արտաշատ համայնքում 4 ժամվա ընթացքում թափվել է ամսական նորմայից 1,5 անգամ ավել տեղումներ (58 մմ):

Երեւանում մայիսի 8-ի եւ 11-ի ցերեկը սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, ամպրոպի ժամանակ նաեւ քամու ուժգնացում 15-18 մ/վ արագությամբ: Մայիսի 7-ին, 9-10-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Մարզերում մայիսի 8-ի ցերեկը շրջանների զգալի մասում, 10-11-ին առանձին շրջաններում կեսօրից հետո սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, առանձին վայրերում՝ կարկուտ, 6-ի ցերեկն առանձին շրջաններում անձրեւները կլինեն հորդառատ: Մայիսի 7-ին եւ 9-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Հարավարեւմտյան՝ 2-5 մ/վ, ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում 18-22 մ/վ արագությամբ: Օդի ջերմաստիճանը մայիսի 7-10-ին աստիճանաբար կբարձրանա 4-7 աստիճանով:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»

ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՏՆԿԵՑԻՆ 300 ԾԱՌ

Ապրիլի 19-ին՝ Երկիր մոլորակի միջազգային օրվան ընդառաջ, «Իմ անտառ Հայաստան» հասարակական բնապահպանական կազմակերպության հետ համատեղ իրականացվող նախագծի շրջանակում «Արդշինբանկի» աշխատակիցները մասնակցել են Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքում կայացած ծառատունկին, որի ընթացքում տնկվել է շուրջ 300 ծառ: «Իմ անտառ Հայաստան» կազմակերպության փորձառու մասնագետների ղեկավարությամբ իրականացված նախաձեռնությունը խորհրդանշորեն միավորեց շրջակա միջավայրի պաշտպանության շուրջ խնդիրները եւ երկու կազմակերպությունների թիմային աշխատանքը՝ հանուն կենսաբազմազանության պահպանման եւ Հայաստանի կայուն աղագայի:

«Արդշինբանկից», մեկնաբանելով միջոցառումը, նշեցին. ««Արդշինբանկը» հավատարիմ է պատասխանատու բանկային գործունեության սկզբունքներին եւ կարեւորում է շրջակա միջավայրի կայունության ապահովումը եւ պաշտպանությունը: Սա հիանալի օրինակ է մեր հաճախորդների եւ գործընկերների համար՝ ոչ միայն աջակցելու նախաձեռնությանը, այլեւ ամրապնդելու գործընկերությունը եւ համերաշխության ոգին բոլոր նրանց հետ, ովքեր հոգ են տանում մեր երկրի առողջ ապագայի մասին: Այս առումով, Գեղարքունիքում տեղի ունեցած միջոցառումը մեր կարգախոսի՝ «Մենք ուժեղ ենք միասին», հստակ հաստատումն է»:

Հիշեցնենք, որ «Արդշինբանկը», համագործակցելով «Իմ անտառ Հայաստան» հասարակական բնապահպանական կազմակերպության հետ, իրականացնում է երկարաժամկետ բնապահպանական ծրագիր, որի շրջանակում տնկվել է «Արդշինբանկի» անվանական անտառը: Նախագիծը մեկնարկել է 2024 թվականի հոկտեմբերին. Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի վարչական սահմաններում իրականացվել են ավելի քան 6 հեկտար տարածք զբաղեցնող անտառի տնկման աշխատանքներ, որի ընթացքում տնկվել են բացառապես տեղական անտառային ծառատեսակներ, հիմնականում կաղնի, կեչի, վայրի տանձ, վայրի խնձորենի, թխկի եւ թեղի: Իրականացվող բնապահպանական ծրագրի նպատակներից է, որ «Արդշինբանկի» անվանական անտառը զգալիորեն ընդլայնի Լոռու «կանաչ թոքերի» մասշտաբներն ու հնարավորությունները եւ ընդհանուր առմամբ կլանի մոտ 2000 տոննա CO_2 վնասակար արտանետումները:

«Իմ անտառ Հայաստան» հասարակական կազմակերպությունը գործունեության 5 տարիների ընթացքում արդեն իրականացրել է ավելի քան 2,3 միլիոն ծառերի անտառտնկման եւ անտառվերականգնման աշխատանքներ Լոռու եւ Տավուշի մարզերի 750 հա տարածքում:

«Արդշինբանկը» Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: «Արդշինբանկը» սպասարկում է ավելի քան 410,000 հաճախորդի՝ 2,100-ից ավելի աշխատակիցների աջակցությամբ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 71 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով:

Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաեւ ներկայացուցչություն Փարիզում: «Արդշինբանկը» Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳՆԱՃԻ ՏԵՄՊԵՐՆ ԱՐԱԳԱՑԵԼ ԵՆ

2025 թվականի առաջին եռամսյակի ընթացքում 12-ամսյա գնաճը արագացել է՝ մարտին կազմելով 3.3%:

Այս մասին հայտնում են Կենտրոնական բանկից: «Միաժամանակ, 12-ամսյա բնականոն գնաճը եւս որոշակի ավելացել է՝ դեռեւս պահպանվելով թիրախից ցածր՝ 2.0% մակարդակում: 2025 թ. երկրորդ եռամսյակում համաշխարհային եւ Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում պահանջարկի հետագա դանդաղման, իսկ ԱՄՆ-ում, զուգահեռաբար նաեւ գնաճի արագացման ռիսկերն էականորեն ավելացել են: ԱՄՆ տնտեսական քաղաքականության, հատկապես առեւտրային քաղաքականության եւ դրա մակրոտնտեսական ազդեցությունների շուրջ բարձր անորոշությունը պահպանվում է: Այս պայմաններում, միջազգային ապրանքահումքային շուկաներում ձեւավորվել են գների նվազման առարկայական ռիսկեր: Մյուս կողմից՝ միջազգային առեւտրային հարաբերություններում աճող լարվածությամբ, ինչպես նաեւ աշխարհաքաղաքական խնդիրներով պայմանավորված՝ առաջարկի արժեշղթաների հնարավոր խաթարման եւ համաշխարհային գնաճային ռիսկերը պահպանվում են:

Ավելացել են միջնաժամկետում ԱՄՆ-ի հարկաբյուջետային քաղաքականության կողմից ամբողջական պահանջարկի խթանման չափի, դրանից ածանցվող պարտքի մեծացման եւ երկարաժամկետ տոկոսադրույքների վրա հավանական ազդեցությունների վերաբերյալ անորոշությունները:

Այս համատեքստում, հաշվի առնելով գործընկեր երկրներում աշխատաշուկայի դեռեւս պահպանվող խիստ պայմանները եւ ընդհանուր բարձր գնաճային միջավայրը, հավանական է, որ առաջատար երկրների կենտրոնական բանկերն առաջիկայում հիմնականում կպահպանեն կամ աստիճանաբար կթուլացնեն դրամավարկային խիստ պայմանները:

2025 թվականի առաջին եռամսյակում տնտեսական ակտիվությունը Հայաստանում դանդաղել է՝ մեծապես կրելով որոշ կարճաժամկետ, ոչ կառուցվածքային աճի գործոնների աստիճանական չեզոքացման ազդեցությունը: Ակտիվության աճին շարունակել են զգալիորեն նպաստել շինարարության եւ ծառայությունների ճյուղերի բարձր աճը: Միեւնույն ժամանակ, տնտեսական աճի կառուցվածքային առանձնահատկություններից բխող՝ աճի կայունության, երկարաժամկետ հեռանկարի, ինչպես նաեւ ներքին պահանջարկի հետագա միտումների վերաբերյալ անորոշությունները մնում են բարձր»,-նշված է Կենտրոնական բանկի հաղորդագրության մեջ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԴՐԵՍ ԿՈԴ

Met Gala 2025-Ի ԱՄԵՆԱՎԱՌ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» արվեստի թանգարանը աշխուժացել է՝ հարգանքի տուրք մատուցելով սեւամորթների պատմությանը, մշակույթին եւ ոճին ամենամյա Met Gala-ում:

Այս տարվա շատ սպասված Tailored for You դրես-կոդը ոգեշնչվել է Կոստյումների ինստիտուտի ուղեկցող ցուցահանդեսից՝ Superfine: Tailoring Black Style-ից, որն ուսումնասիրում է սեւ դենդիզմի պատմությունը: Այս տարի առաջին անգամ է, որ Met Gala-ն ներկայացրել է տղամարդկանց հագուստի վրա կենտրոնացած դրես-կոդ՝ ստիպելով դիզայներներին վերանայել իրենց կին հաճախորդների համար կարելու ավանդույթները:

Կարմիր գորգը լեփ-լեցուն էր չափազանցված կոստյումներով՝ սկսած Marc Jacobs-ի՝ 1980-ականներից ոգեշնչված Doja Cat բլեյզերի լայն ուսերից մինչեւ լայն շերտավոր բաճկոններ, որոնք կրում էին բոլորը՝ դերասանուհի Թեսա Թոմփսոնից մինչեւ ռեփեր Doechii: Առաջարկում ենք դիտել նորաձեւության ամենակարեւոր միջոցառման ուշագրավ լուսանկարներից:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ՄԵՍՍԻՆ ՏՊԱՎՈՐՎԱԾ Է

«Ինտեր Մայամիի» հարձակվող Լուիս Սուարեսը հայտնել է, որ իր թիմակից Լիոնել Մեսսին տպավորված է Հանս-Դիտեր Ֆլիկի գլխավորությամբ «Բարսելոնայի» խաղով: «Մեսսին դեռեւս հետեւում է «Բարսայի» բոլոր խաղերին եւ ուրախանում է թիմի հաջողություններով Ֆլիկի ղեկավարությամբ: Մի քանի օր առաջ Լեոն ասաց ինձ, որ շատ է զարմացած եւ հպարտ, քանի որ թիմը վերականգնել է իր ինքնությունը»,-Սուարեսի խոսքերն է մեջբերում լրագրող Միգել Բլասկեսը սոցիալական ցանցերում: 60-ամյա Հանս-Դիտեր Ֆլիկը «Բարսելոնայի» գլխավոր մարզիչն է 2024 թվականի մայիսից: Նրա գլխավորությամբ թիմը 2025 թվականին նվաճել է Իսպանիայի Սուպերգավաթը: Բացի այդ, «Բարսելոնան» Լա Լիգայի մրցաշարային աղյուսակի առաջատարն է՝ 34 խաղից հետո վաստակելով 79 միավոր:

ՍԹԱՓՎԵԼՈՒ ԿՈՉ Է ԱՐԵԼ

«Մանչեսթեր Յունայթեդի» նախկին հարձակվող Ուեյն Ռունին կարծում է, որ նույնիսկ Եվրոպայի լիգայում հաջողությունը չի կարող թաքցնել ակումբի խորքային խնդիրները եւ կոչ է անում արագ լուծել դրանք: Նա ընդգծել է, որ հիմնական եւ երիտասարդական կազմերի խաղաոճի անհամապատասխանությունը խոչընդոտում է երիտասարդ ֆուտբոլիստների առաջընթացին, որոնք կազմում են Ռուբեն Ամորիմի թիմի հիմնական միջուկը: «Մ-21 թիմը խաղում է չորս պաշտպանով, ինչը տարօրինակ է, քանի որ երկրորդ կազմի շատ խաղացողներ պետք է հանդես գան հիմնական թիմում: Նրանցից ոմանք արդեն ընդգրկված են առաջին կազմում եւ խաղաժամանակ են ստանում Մ-21-ում, բայց այլ մարտավարությամբ: Դա շփոթեցնող է: Եվրոպայի լիգայի եզրափակիչ դուրս գալը միայն ժամանակավորապես է քողարկում խնդիրները: «Մանչեսթեր Յունայթեդը» լուրջ մարտահրավերների առաջ է, որոնք պետք է հնարավորինս արագ լուծվեն»,- ասել է Ռունին BBC-ին:

ՊԱՏՄԵԼ Է ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մյունխենի «Բավարիայի» հարձակվող Հարի Քեյնը կիսվել է իր զգացողություններով՝ կապված ֆուտբոլային կարիերայի առաջին տիտղոսը նվաճելու հետ: «Բավարիան» Բունդեսլիգայի 2024/25 մրցաշրջանի չեմպիոնությունը վաղաժամ ապահովեց 32-րդ տուրում՝ «Բայերի» եւ «Ֆրայբուրգի» միջեւ ոչ-ոքի (2:2) խաղից հետո: 31-ամյա Քեյնի համար սա առաջին տիտղոսն է պրոֆեսիոնալ կարիերայում: «Չեմպիոն դառնալը աննկարագրելի զգացողություն է: Շնորհակալ եմ երկրպագուներին՝ տնային եւ արտագնա խաղերում ցուցաբերած անխոնջ աջակցության համար: Ձեր ներկայությունն այս հաջողությունը դարձրեց հնարավոր: Հպարտ եմ, որ առաջին տիտղոսս նվաճեցի «Բավարիայի» հետ: Եկեք տոնենք առաջիկա շաբաթները»,- ասել է Քեյնը «Բավարիայի» մամուլի ծառայության տարածած տեսաուղերձում:

ԺԱՄԱՆՑ

ՄԱՍԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԴԱՏԸ

Իլոն Մասկը կշարունակի դատը OpenAI-ի եւ նրա գործադիր տնօրեն Սեմ Ալթմանի դեմ՝ չնայած ամերիկյան ընկերությունը հրաժարվել է առեւտրայնացման ծրագրերից: Այս մասին հայտնել է Մասկի փաստաբան Մարկ Թոբերոֆը: Նրա խոսքերով, որոնք մեջբերել է Reuters գործակալությունը, Մասկը մտադիր է շարունակել OpenAI-ի դեմ «չափազանց հետաքրքիր դատը»: Ատենակալների դատավարությունը նշանակված է 2026թ. մարտին: Փաստաբանն այս հայտարարությունն արել է մի քանի ժամ անց այն բանից հետո, երբ ChatGPT արհեստական բանականության (ԱԲ) չաթբոտի հետեւում գտնվող ընկերությունը հայտարարել է, որ հրաժարվում է պլանավորված վերակառուցումից: Նպատակն էր OpenAI-ը վերածել շահույթ ապահովող ձեռնարկության, ինչին Մասկը կտրականապես դեմ է:

«OpenAI-ը հիմնադրվել է որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն եւ այսօր էլ շարունակում է շահույթ չհետապնդել» եւ կպահպանի նույն կարգավիճակը իր առեւտրային գործունեության նկատմամբ վերահսկողության տեսանկյունից, նշվել է Ալթմանի հայտարարությունում: Այն արվել է քննադատությունների փոթորկից եւ իրավաբանական խնդիրներից հետո: Դրանցից ամենամեծը մրցակից եւ համահիմնադիր Մասկի կողմից ներկայացված հայցն էր, որը մեղադրում էր OpenAI-ին արհեստական բանականության զարգացման հիմնադիր առաքելությունից շեղվելու մեջ:

Մասկը դատի է տվել OpenAI-ին եւ Ալթմանին 2024թ. մարտին: Ձեռնարկատերը դեմ է արտահայտվել OpenAI-ն առեւտրային կազմակերպության վերածելուն, որն աջակցում է ամերիկյան տեխնոլոգիական հսկա Microsoft-ին: Սա, ըստ միլիարդատիրոջ, հակասում է 2015 թվականի համաձայնագրին, որը Մասկը ստորագրել է որպես համահիմնադիր:

ԴԱՀԼԻՃ ՉԻ ՏՐԱՄԱԴՐԵԼ

Կապանի քաղաքապետարանը հրաժարվել է «Վազգեն. Վերջին Սպարապետը» ֆիլմը ցուցադրելու համար տրամադրել մշակույթի տան տարածքը՝ վճարովի հիմունքներով, որի համար եղել է նախնական պայմանավորվածություն քաղաքապետարանի աշխատակիցների հետ. այս մասին հրապարակված է Genetic Production-ի ֆեյսբուքյան էջում:

«Սիրելի կապանցիներ,

Կապանի քաղաքապետարանը հրաժարվել է «Վազգեն. Վերջին Սպարապետը» ֆիլմը ցուցադրելու համար տրամադրել մշակույթի տան տարածքը՝ վճարովի հիմունքներով, որի համար եղել է նախնական պայմանավորվածություն քաղաքապետարանի աշխատակիցների հետ... Ցավում ենք սիրելի Կապանցիներ ջան, եւ ցավում ենք նաեւ մեր երկրի համար, որ նման արժեքներ ունեցող մարդիկ կան... Ցավով տեղեկացնում ենք, որ Կապանում ցուցադրություն չի լինելու»,-նշված է հաղորդագրության մեջ:

● *Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում մայիսի 8-ին տեղի կունենա «Չորս պատճառ ամուսնության համար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500-4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ են քահանաները ծառայում բանակում: Մի՞թե եկեղեցին պատերազմն օրհնում է:

Ալվինա Հովհաննիսյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Բանակը, նախեւառաջ քաղաքացիական հասարակությունից տարբերվող յուրահատուկ կառույց է՝ հիմնված խիստ, անվերապահ հնազանդության վրա: Տիրոջ մոտ եկած հարյուրապետն ասաց Նրան. «...քանի որ ես էլ իշխանության տակ եղող մարդ եմ, ինձ ենթակա զինվորներ ունեմ. սրան ասում եմ՝ գնա՛, եւ գնում է, եւ մի ուրիշին, թե՝ եկ, եւ գալիս է. եւ իմ ծառային, թե՝ արա՛ այս, եւ անում է» (Մատթ. 8.9): Զինվորի կյանքը խիստ սահմանափակված է կանոններով, որոնց համաձայն սահմանված են ամենապարզ գործողություններ՝ տեղաշարժվելը, սնվելը եւ այլն: Բանակում, ինչպես վանքում, գործում է սեփական կամքից հրաժարվելով՝ հրամանատարին անվերապահ հնազանդության օրենքը: Թեեւ զինվորը «շախմատի ֆիգուրի» պես է, «սվին» կամ «թնդանոթի միս», սակայն չի դադարում անձ լինելուց, որովհետեւ ստեղծվել է Աստծո պատկերով եւ նմանությամբ: Զինվորի, ինչպես յուրաքանչյուր անձի, ներքին ազատությունը կայանում է ճշտի եւ ստի, բարու եւ չարի, հավատարմության եւ դավաճանության միջեւ ընտրություն կատարելու բարոյական ազատության մեջ: Զինվորական ծառայությունն անհնար է պատկերացնել առանց հայրենիքի նկատմամբ սիրո, առանց զինվորականների մեջ հայրենասիրական զգացումների դաստիարակության, որոնք չեն կարող չառնչվել մերձավորի նկատմամբ սիրո հետ: Բանակային պայմաններում մարդը հատկապես սուր է զգում ծնողների, ընկերների, սիրելիի նկատմամբ կապվածությունն ու սերը:

Օրհնությամբ՝ Տ. Սմբատ քահանա Սարգսյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պատերազմի ողբերգական իրադարձությունները դրան մասնակից մարդկանց կյանքում անխուսափելիորեն ստեղծում են աններդաշնակություն, ներքին հոգեկան երկփեղկվածություն, հատկապես նրանց, ովքեր սպանել են զինվորականների կամ այլոց: Բանակում քահանայի խնդիրն է օգնել զինվորին հաղթել չարի հետ այդ ներքին հոգեւոր պատերազմը: Քահանան պարտավոր է օգնել զինվորին հոգեւոր-բարոյական տեսանկյունից ճիշտ գնահատել այն գործը, որն ինքն անում է, որպեսզի այն բարոյապես արդարացի եւ սուրբ գործ համարի:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ կարո՞ղ է արդյոք ավանդի փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձը ստանալ մահացած ամուսնու կողմից ներդրված ավանդի փոխհատուցման գումարը:

Նելլի Պողոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ եթե ավանդի փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձի ավանդատու հանդիսացող ամուսինը մահացած է եւ մահացած ամուսնու անունով ավանդը ներդրվել է նրանց համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, ապա այն դիտարկելով ավանդի նկատմամբ մահացածի հետ ընդհանուր համատեղ սեփականություն՝ ողջ ամուսնու համար փոխհատուցման իրավունքը ճանաչվում է մահացած ամուսնու ավանդի 50 տոկոսի դիմաց:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավանդատուի՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ փոխհատուցում ստանալու գույքային իրավունքը համարվում է դադարած կատարմամբ՝ վճարմամբ, կամ ավանդատուի մահով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հորդառատ անձրեւից հետո «Բարեկամության» մետրոյի գետնանցումում «ջրհեղեղ» էր:

Մարդիկ ստիպված իրենց միջոցներով մաքրում էին տարածքը, քանի որ քայլել հնարավոր չէր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 5 + 12+ 15
Կոտայքի լեռներ	+ 2 + 4 + 11+ 14
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 +16 + 18
Գեղարքունիք	+ 2 + 4 + 11+ 14
Լոռի	- 3 + 2 +15 + 18
Տավուշ	+ 1 + 5 +18 + 22
Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 +14 + 18
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 4 +15 + 18

Արարատ	+ 3 + 5 + 17+ 20
Արմավիր	+ 3 + 5 + 20+ 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 4 + 12+ 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 5 + 19 + 20
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 + 20+ 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 3 +16 + 19
ԼՂՀ	+ 3 + 5 +13 + 17
Երեւան	+ 4 + 6 +17 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.5.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*